Տարածվում է անվճար

- **«Ձայն» վերլուծական տեղեկատվական լրատուն**

  նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

- **լուսաբանել**

  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**

  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:

- **Ծրագիրն իրականացնում է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն**

  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:




# Սահմանադրական փոփոխություններ. այո թե՞ ոչ

## Ինչու՞ են մեզ առաջարկում փոխել Սահմանադրությունը

1995 թվականին ընդունված և ներկայումս գործող սահմանադրությունը միշտ եղել է քննադատության առարկա: Եվրոպացիները այն քննադատում են, քանի որ իրենց չափանիշների համեմատ Հայաստանում Նախագահի իշխանությունը խիստ մեծ է, կարելի է ասել գործնականում գրեթե անսահմանափակ: Մարդու իրավունքների պաշտպանները պնդում են, որ գործող սահմանադրությամբ դատական համակարգն անկախ չի կարող լինել: Սփյուռքը սահմանադրությանը մեղադրում է այն բանում, որ այն արգելում է երկքաղաքացիությունը: Կարելի է ասել, որ գրեթե բոլոր շահագրգիռ կողմերը պարբերաբար բողոքում են գործող սահմանադրությունից:

Արդյո՞ք տեղին են այդ քննադատությունները: Որոշ մարդիկ կարծում են, որ ոչ, դրանք տեղին չեն, քանի որ մեր այսօրյա դժվարությունների պատճառը միայն սահմանադրության թերությունները չեն: Չնայած այս մոտեցումը ևս արդարացված է, բայց գոյություն ունի ակնհայտ ճշմարտություն. գործող սահմանադրության արդյունքում է, որ Հայաստանում ամբողջ իշխանությունը կենտրոնացած է մեկ բևեռում: Եվ եթե իշխանության նման կենտրոնացումը մեր երկրի համար իրոք պրոբլեմ է, ապա դրանում իրոք մեղավոր է Սահմանադրությունը: Ավելի հավասարակշռված սահմանադրության դեպքում ոչ մի նախագահ չէր կարողանա վայելել նման մեծ իշխանություն:

## Սահմանադրական փոփոխությունների «ոդիսականը»

Երբ ՀՀ գործող Նախագահ Քոչարյանը 1998-ին եկավ իշխանության, նա խոստացավ մոտ ապագայում փոխել սահմանադրությունը և դարձնել այն ավելի հավասարակշռված ու ժողովրդավարական: Նորընտիր նախագահի համար այդ քայլը քաղաքական դաշտում որպես «բարեփոխիչ» հանդես գալու լավ առիթ էր: Մյուս կողմից այս խոստումով նա իր կողմը գրավեց մի շարք քաղաքական ուժերի, որոնք քննադատում էին 1995 թվականին ընդունված Սահմանադրությանը, պնդելով, որ այդ սահմանադրությունը ստեղծված է հատուկ նախորդ նախագահի իշխանության ամրապնդման համար:

Այս խոստումի իրականացման համար Նախագահից պահանջվեց ոչ ավել ոչ պակաս հինգ տարի և 2003 թվականին քվեարկության դրվեց սահմանադրության նոր տարբերակը, որով կրճատվում էին Նախագահի լիազորությունները: Բայց այդ ժամանակ իշխանությունները «մոռացան» քարոզարշավ ծավալել փոփոխությունների օգտին, տարված լինելով Ազգային Ժողովի ընտրություններով: Արդյունքում փոփոխությունները բավարար կողմնակիցներ չունեցան և դրանք չանցան: Այժմ իշխանությունները երկրորդ փորձն են կատարում և թվում է, որ այս անգամ նրանք ավելի լուրջ են մոտենում այս գործընթացին:

Սահմանադրական փոփոխությունների պատմությունը չի կարելի Եվրոպայի Խորհրդին Հայաստանի անդամակցության գործընթացից առանձին դիտարկել: Եվրոպացիները, խիստ ոգևորված Հայաստանի իշխանությունների, հատկապես Նախագահի պատրաստակամությունից, այս հարցը ներառեցին Եվրոպայի Խորհրդին միանալու հետ կապված Հայաստանի պարտավորությունների ցուցակում:

## Ո՞ր ոլորտներին են առնչվում փոփոխությունները

Ամենակարևոր փոփոխություններն են.

- Նախագահ - Ազգային Ժողով - Կառավարություն փոխհարաբերությունների փոփոխություններ, որի արդյունքում ընդհանուր առմամբ զգալիորեն ուժեղանում է Ազգային Ժողովի և Կառավարության դերը և փոխարենը թուլանում են Նախագահի ֆունկցիոնալ լիազորությունները և հետևաբար նաև նրա իշխանությունը,
- դատական համակարգի արմատական բարեփոխումներ, որի արդյունքում դատական համակարգը պետք է որ ավելի անկախ դառնա,
- Տեղական ինքնակառավարման ընդհանուր ուժեղացում, Երևան քաղաքին տեղական ինքնակառավարման իրավունքով օժտում,
- Մարդու իրավունքների պաշտպանության համակարգի ուժեղացում,
- Երկքաղաքացիության արգելքի վերացում:

## Իշխանության տարանջատում, Նախագահի լիազորությունների կրճատում

Ընդհանրապես սահմանադրական իրավունքում գոյություն ունի այսպես կոչված «հակակշիռների և զսպումների» հասկացությունը, որի վրա պետք է կառուցվեն իշխանությունների տարբեր թևերի միջև հարաբերությունները: Ցավոք, Հայաստանի ներկայիս սահմանադրությունը չի նախատեսում Նախագահին հակակշռող ոչ մի մեխանիզմ: Այս իմաստով հաճախ կարելի է լսել այն կարծիքը, որ մեր ներկա սահմանադրությունը վառ օրինակն է այն բանի, թե ինչպիսին չպետք է լինի ժողովրդավարական սահմանադրությունը:

Հիմա տեսնենք, թե Նախագահ-Ազգային Ժողով-Կառավարություն փոխհարաբերությունների համատեքստում ինչ է ասում գործող սահմանադրությունը: Նախ ամենակարևորը, Նախագահը երբ կամենա կարող է ցրել իրեն դուր չեկած, օրինակ ընդդիմադիր, Ազգային Ժողովը: Այստեղից հետևություն՝ Հայաստանում սահմանադրությամբ ըստ էության խստիվ «արգելված» է Նախագահին ընդդիմադիր Ազգային Ժողով ունենալ: Սա է պատճառը, որ վերջին տաս տարիներին ոչ մի գումարման Ազգային Ժողով երբեք ընդդիմադիր չի եղել Նախագահին: Այս իմաստով Հայաստանը նման է 200 տարի առաջ գոյություն ունեցող սահմանադրական միապետություններին, երբ միապետը թույլ էր տալիս ունենալ օրենսդիր ժողով, որին ցրում էր երբ կամենար, հատկապես հենց տեսնում էր, որ օրենսդիրները թույլատրելիից ավելի են «ոգևորվել»:

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար, պետք է նշել, որ սահմանադրությունը Ազգային Ժողովին տալիս է որոշակի լծակ Նախագահին պաշտոնանկ անելու համար, բայց սա միայն այն դեպքում, երբ Նախագահը հանցանք է գործել և դա ապացուցվել է Սահմանադրական Դատարանում: Բայց չենք կարծում, որ այս մեխանիզմը մեծ մխիթարություն է, քանի որ խոսքը չի գնում քաղաքական պայքարում անհամաձայնությունների դեպքում հակակշռման և զսպման լծակի մասին, այլ պարզապես հանցանք կատարած մարդուն պետական պաշտոնից հեռացնելու մասին:

Գործող սահմանադրության մյուս վիճահարույց մասը վերաբերում է Հայաստանի Կառավարության ձևավորմանը: Այստեղ ևս ամեն ինչ շատ պարզ է. Նախագահն է նշանակում Վարչապետին, առանց որևէ մեկի հետ համաձայնեցնելու: Նա կարող է ցանկացած պահին պաշտոնից հեռացնել Վարչապետին և այստեղ ևս սահմանափակում չկա: Նախագահն է որոշում ինչ նախարարություններ են երկրին պետք, ինքն է հրամայում փակել և բացել նախարարությունները: Հետաքրքիր մի մանրամասն ևս. Կառավարության որոշումները ուժի մեջ են մտնում միայն այն ժամանակ, երբ Նախագահը համաձայն է դրանց և հաստատում է դրանք իր «ամենակարող» ստորագրությամբ: Այսինքն Հայաստանում Կառավարությունը ոչ թե առանձին միավոր է, այլ պարզապես հանդիսանում է Նախագահին կից գործող գրասենյակ, որը զբաղվում է «առօրյա թեթև գործերով»: Կարծես թե գործող սահմանադրությամբ Նախագահն օժտված է արքայական լիազորություններով: Միակ մեխանիզմը, որն իրականում սահմանափակում է Նախագահի իշխանությունը դա նախագահական ընտրություններն են:

Հիմա տեսնենք թե ինչ է առաջարկվում Նոյեմբերի 27-ի հանրաքվեին դրված սահմանադրական այս փոփոխություններով: Նախ, Նախագահը Վարչապետին նշանակում է միայն Ազգային Ժողովի համաձայնությամբ: Նշանակելուց հետո նա չի կարող Վարչապետին ազատել աշխատանքից, քանի դեռ Ազգային Ժողովը համաձայն չէ դրանում: Կառավարության կազմը, այսինքն նախարարությունների թիվը և անվանացանկը հաստատվում է օրենքով, այլ ոչ թե Նախագահի հրամանագրով: Կառավարության որոշումները մտնում են ուժի մեջ առանց Նախագահի համաձայնության և Վարչապետն է ստորագրում դրանց տակ: Այսինքն այս փոփոխություններով մենք ունենալու ենք Նախագահից առանձին գործող Կառավարություն, որն ըստ էության ավելի շատ պատասխանատու կլինի Ազգային Ժողովին, քան Նախագահին:

Իսկ ինչ վերաբերում է Նախագահ - Ազգային ժողով հարաբերություններին, ապա այստեղ նախատեսվում է արմատական բարեփոխումներ, այսինքն չեղյալ է համարվում ցանկացած պահի Ազգային Ժողովը ցրելու Նախագահի իրավունքը: Նոր Սահմանադրությամբ Նախագահը կարող է ցրել Ազգային Ժողովի միայն որոշակի դեպքերում, այն է, եթե Ազգային Ժողովի պատգամավորները երեք ամիս շարունակ չկարողանան «իրար գլուխ» հավաքվել և քվորում ապահովել, կամ եթե չկայացնեն որևէ որոշում երեք ամսվա ընթացքում, կամ էլ եթե երկուսից ավել անգամ հավանության չարժանացնեն իրենց իսկ կողմից վստահության արժանացած Վարչապետի ներկայացրած Կառավարության ծրագիրը: Այսինքն, այս փոփոխություններով Նախագահը զրկվում է հանուն քաղաքական հաշվեհարդարի Ազգային Ժողովը ցրելու իրավունքից, փոխարենը ստանալով հնարավորություն ցրել Ազգային Ժողովը հստակորեն սահմանված այն կոնկրետ դեպքերում, երբ այն ֆիզիկապես դադարել է ռացիոնալ օրենսդիր գործունեությամբ զբաղվելուց:

Նկարում ցույց է տրված Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության կշիռների հնարավոր փոփոխությունը Սահմանադրական բարեփոխումների անցնելու դեպքում: Փոփոխությունների ընդունման դեպքում Ազգային ժողովը իր ունեցած կշռով ոչ մի




կետով չի զիջի Նախագահին, իսկ կառավարությունը կհզորանա և դուրս կգա Նախագահի միանձնյա վերահսկողության տակից:

Կարծես թե ակնհայտ է, որ առաջարկվող փոփոխությունները ստեղծում են ավելի ապակենտրոնացված և բազմաբևեռ իշխանական համակարգ, որտեղ չի լինելու մեկ հզոր «թագավոր»: Այնպես, որ կարելի է ասել, որ այս առաջարկությունները հասարակության ժողովրդավարացման համար խիստ անհրաժեշտ են: Բայց արդյո՞ք մենք այս փոփոխություններով միայն շահում ենք: Կարող է տարօրինակ թվալ, բայց ներկայումս գործող Սահմանադրությամբ Նախագահին տրված «թագավորական» լիազորությունները ևս կարող էին օգտակար լինել երկրին: Սա իհարկե այն դեպքում, եթե Նախագահը լիներ խիստ բարեփոխիչ, անսխալ, գրեթե «կիսաստված»: Այդ դեպքում նա կարող էր օգտագործել իր ամբողջ այդ լիազորությունները, վերցներ Հայաստանը իր ուժեղ ուսերին և մի քանի հզոր «ցատկերով» երկիրը տաներ դեպի բոլորիս երազած լուսավոր ապա-

*Շարունակությունը հաջորդ էջում*

*Սկիզբը նախորդ էջում*

գան: Նա կարող էր մի հարվածով վերացնել կաշառակերությունը, ամրապնդել պետական իշխանությունը, ստեղծեր հավասար պայմաններ բոլոր գործարարների համար, ստեղծեր սոցիալական պաշտպանություն և այլն:

Բայց ցավոք, մեր վերջին 10 տարիների փորձը ցույց տվեց, որ նման «կիսաստված» և անսխալական նախագահներ Հայաստանում դեռևս չեն ծնվել և դժվար թե մոտ ապագայում ծնվեն, իսկ նախագահներին տրված գեր-լիազորությունները ավելի շատ ծառայում են որոշակի խմբերի, քան թե ժողովրդի ընդհանուր շահերին: Այդ պատճառով հայ ժողովրդի համար գուցե ճիշտ կլինի մեկընդմիշտ մոռանալ այդ «սուպեր-նախագահի», բարի և անսխալ թագավորի, ուժեղ բազուկների և հզոր ցասկերի մասին առասպելները և ստեղծել ժամանակակից ժողովրդավարական մասնակցային հասարակություն, որը կտանի երկիրը ճիշտ ուղղությամբ:

## Դատական համակարգ

Դատական համակարգում նախատեսված են երեք հիմնական փոփոխություններ. **դատավորների նշանակման կարգը, Սահմանադրական դատարանին դիմելուն առնչվող խնդիրները և գլխավոր դատախազի նշանակման կարգը:**

Ժամանակակից հասարակություններում ընդունված է, որ դատական մարմինները պիտի լինեն անկախ և կառավարվեն միայն ու միայն օրենքներով և իրենց խղճով: Դա խիստ կարևոր պայման է արդարադատություն ունենալու համար: Դրա համար էլ ժողովրդավարական երկրներում ստեղծված են այնպիսի մեխանիզմներ, որոնք դատավորներին չեն դնի կախման մեջ որևէ մեկից:

Վերադառնանք Հայաստան: Ի՞նչ եք կարծում, կարող են անկախ լինել այն դատավորները, որոնք նշանակվում են այնպիսի Արդարադատության խորհրդի կողմից, որը նախագահում է երկրի Նախագահը, փոխնախագահներն են Արդարադատության նախարարը և երկրի Գլխավոր դատախազը, ընդ որում այդ խորհրդի մնացած 23 անդամներից 14–ին նշանակում է երկրի Նախագահը, և միայն մնացած 9 անդամներին է փակ գաղտնի քվեարկությամբ նշանակում Դատավորների ընդհանուր ժողովը: Կարծում եմ պատասխանը միանշանակ է: Նույնիսկ եթե աշխարհի ամենաժողովրդավարական երկրում երկրի Նախագահին տրվի բոլոր դատավորներին նշանակելու նման անսահմանափակ հնարավորություն, այդ երկրում կարելի կլինի մոռանալ արդարադատության մասին:

Իսկ ի՞նչ են նախատեսում առաջարկվող փոփոխությունները: Համաձայն դրանց դատավորների նշանակման հարցերի պատասխանատու Արդարադատության խորհուրդը կունենա 13 անդամ, որից միայն երկուսին (ընդ որում միայն իրավաբան գիտնականների) կնշանակի երկրի Նախագահը, ևս երկուսին - Ազգային ժողովը, իսկ մնացած 9-ը կընտրվեն փակ գաղտնի քվեարկությամբ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Այսինքն, այս կարևոր մարմնում կնվազեցվի Նախագահի, Արդարադատության նախարարի և Գլխավոր դատախազի գերիշխող դիրքը, Նախագահի նշանակած անձինք կկազմեն որհրդի անդամների ընդամենը 15 տոկոսը, այսօրվա վճռորոշ 65 տոկոսի փոխարեն:

Սահմանադրական արդարադատության վերաբերյալ փոփոխությունները վերաբերում են Սահմանադրական դատարան դիմելու կարգին: Ներկայումս Սահմանադրական դատարան կարող են դիմել երկրի Նախագահը, առնվազն 44 պատգամավորներ (համատեղ), նախագահական և պատգամավորական ընտրությունների թեկնածուները՝ ընտրությունների արդյունքները վիճարկելու համար, և կառավարությունը: Նախատեսվող փոփոխություններով սահմանադրական դատարան դիմելու համար պատգամավորների անհրաժեշտ նվազագույն թվաքանակը 44–ից իջեցվել է 27-ի: Դիմելու իրավունք են ստացել նաև տեղական ինքնակառավարման մարմինները (քաղաքապետարաններ, գյուղապետարաններ), եթե գտնում են, որ կենտրոնական իշխանությունները (և մարզպետարանները) ոտնահարում են իրենց իրավունքները, ինչպես նաև սովորական քաղաքացիները, եթե գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված նորմատիվ ակտը հակասահմանադրական է:

Սահմանադրական փոփոխություններով առաջարկվում է նաև, որ Ազգային Ժողովը պետք է իր համաձայնությունը տա Գլխավոր Դատախազի նշանակմանը: Ներկայում Գլխավոր Դատախազի նշանակումը կատարվում է Կառավարության կողմից առանց Ազգային Ժողովի համաձայնություն, որը հնարավորություն է տալիս այս կարևոր պաշտոնը ևս ենթարկել էլի նույն նախագահական բևեռին:

## Տեղական Ինքնակառավարում

Այստեղ կան հետևյալ հիմնական փոփոխությունները. **Տեղական ինքնակառավարման հստակ ամրագրումը որպես սահմանադրական նորմ, Երևան քաղաքի կարգավիճակը, և համայնքի ղեկավարի պաշտոնանկման հարցերը:**

1995-ին ընդունված Սահմանադրությունը հստակ չի տալիս տեղական ինքնակառավարման սահմանումը: Այն հետագայում կարգավորվել է օրենքով: Առաջարկվող փոփոխություններով ասվում է, որ **«տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ և բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը»**: Այս դրույթը որակապես նոր մակարդակի է բարձրացնում տեղական ինքնակառավարումը: Տեղական ընտրությունների երեք տարին մեկ անցկացնելու փոխարեն չորս տարին մեկ անցկացնելու առաջարկությունն ևս կբարձրացնի տեղական ինքնակառավարման նշանակությունը:

Իր պրակտիկ նշանակությամբ գուցե ամենակարևոր փոփոխությունը Երևան քաղաքի կարգավիճակն է: Համաձայն գործող Սահմանադրության Երևան քաղաքը համայնք չէ, քանի որ քաղաքապետը ոչ թե ընտրովի է այլ նշանակովի: Իսկ տեղական ինքնակառավարում Երևանում իրականացվում է միայն թաղերի մակարդակով: Երևանի կարգավիճակը միշտ եղել է քաղաքական խնդիր, քանի որ ներկա և նախկին իշխանությունները միշտ մտավախություն են ունեցել, որ Երևանում քաղաքապետի պաշտոնի ընտրովի լինելու դեպքում երկրում տեղի կունենա իշխանության ապակենտրոնացում. Երևանում ապրում է Հայաստանի բնակչության մոտ 40 տոկոսը և իշխանությունների համար ցանկալի չէ ունենալ մրցակից հանձինս Երևանի բնակիչների կողմից ընտրված քաղաքապետի:

Համաձայն առաջարկվող փոփոխությունների, Երևանը կստանա համայնքի կարգավիճակ, հնարավորություն ունենալով ընտրել համաքաղաքային խորհուրդ՝ Երևանի խորհրդարան, ինչպես նաև ունենալ ընտրովի քաղաքապետ: Առաջարկվող փոփոխություններում նշվում է, որ Երևանում քաղաքապետի ընտրությունները կարող են լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի, որը կարգավորվելու է օրենքով: Այստեղ առաջարկվող փոփոխությունները մի քիչ զգուշավոր են, և իշխանություններին թողնում են որոշակի մանևրելու հնարավորություն, որը ևս պայմանավորված է կենտրոնական իշխանությունների քաղաքական զգուշավորությամբ: Դրա արդյունքում, հնարավոր է, որ ապագայում ընդունվելիք օրենքով Երևանում քաղաքապետը ընտրվի անուղղակի, այսինքն սկզբից ընտրվի ասենք 25 հոգուց բաղկացած Երևանի խորհրդարանը, որն էլ իր հերթին կընտրի Երևանի քաղաքապետին: Այնուամենայնիվ, քաղաքապետի ընտրության մեխանիզմը կարգավորվելու է օրենքով, որը հնարավոր կլինի ձևափոխել այնպես, ինչպես հասարակությունը հետագայում պահանջի:

Տեղական ինքնակառավարման վերաբերյալ սահմանադրական փոփոխության մյուս առաջարկությունը վերաբերում է համայնքների ղեկավարներին պաշտոնանկ անելուն: Գործող սահմանադրությամբ համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել Կառավարության կողմից՝ մարզպետի առաջարկությամբ: Սա խիստ հակասական դրույթ է, քանի որ հակասում է տեղական ինքնակառավարման ժամանակակից սկզբունքներին: Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է այս դրույթը փոխել և սահմանել, որ համայնքի ղեկավարի պաշտոնանկ անելու համար անհրաժեշտ է ունենալ սահմանադրական դատարանի համաձայնությունը:

## Մարդու իրավունքների բաժին

Այս բաժինը ենթարկվել է հիմնականում խմբագրական փոփոխությունների, որի արդյունքում հստակեցվել են մարդու իրավունքներին վերաբերող մի շարք դրույթներ: Այս ոլորտի թերևս ամենակարևոր փոփոխությունը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի կամ այսպես կոչված Օմբուդսմենի պաշտոնի վերաբերյալ Սահմանադրությունում առանձին դրույթի սահմանմանը: Ըստ առաջարկվող փոփոխությունների, Ազգային Ժողովը առնվազն 79 ձայնով նշանակում է Մարդու իրավունքների պաշտպանին, որը **«...անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը»** (հոդված 83.1) Ընդ որում, սահմանադրական փոփոխությունները նախատեսում են, որ Ազգային Ժողովը Պաշտպանին նշանակում է 6 տարի ժամկետով և իրավունք չունի ժամանակից շուտ դադարեցնել նրա պաշտոնավարությունը: Այսպիսով հնարավորություն է առաջանում ապահովել այս պաշտոնի անկախությունը և իր բուն նպատակին ծառայելը:

Հիշեցնենք, որ ներկայիս սահմանադրությունը ոչինչ չի նշում Մարդու իրավունքների պաշտպանի մասին և այդ պատճառով էլ ներկայում գործող Պաշտպանը նշանակված է երկրի Նախագահի կողմից, որն այնքան էլ ցանկալի չէ այս կարևոր պաշտոնի իրական անկախության ապահովման համար:

## Երկքաղաքացիությունը

Գործող Սահմանադրությունը արգելում է Հայաստանի Հանրապետության քաղաքացուն ունենալ որևէ այլ երկրի քաղաքացիություն: Այս դրույթը խիստ հակասական է, քանի որ մեր այն հայրենակիցները, որոնք հանդիսանում են այլ երկրների քաղաքացիներ և ուզում են պահպանելով այդ քաղաքացիությունը ձեռք բերեն նաև իրենց պատմական հայրենիքի՝ Հայաստանի քաղաքացիություն, չեն կարող դա անել գործող սահմանադրության պայմաններում: Հիշենք, որ 1995 թվականի հանրաքվեի ժամանակ շատ ու շատ մարդիկ դեմ քվեարկեցին գործող սահմանադրությանը նաև այն բանի համար, որ այն արգելում է երկքաղաքացիությունը:

Առաջարկվող սահմանադրական փոփոխություններում հանված է երկքաղաքացիության արգելքը: Սահմանադրական փոփոխությունների ընդունվելու դեպքում մոտ ապագայում կընդունվի նաև երկքաղաքացիության մասին օրենքը, որը կմանրամասնի, թե ով և ինչպես կարող է ունենալ երկքաղաքացիություն:

Այնուհանդերձ, ի տարբերություն սահմանադրական մյուս փոփոխությունների, սա այն հարցն է, որին դժվար է միանշանակ գնահատական տալ: Մի կողմից երկքաղաքացիությունը թույլատրվում է աշխարհի ավելի քան 100 երկրներում: Ավելին, բոլոր այն երկրները, որոնք, ինչպես Հայաստանը, ունեն մեծ սփյուռք, թույլատրում են երկքաղաքացիությունը և ակնհայտ է, որ երկքաղաքացիությունը կնպաստի սփյուռքի և ընդհանրապես հայապահպանմանը, որը մեր ազգի գերագույն ռազմավարական խնդիրն է հանդիսանում: Սակայն մյուս կողմից կա վտանգ, որ եթե Ռուսաստանում ապրող 1 միլիոն հայ ունենա ինչպես Հայաստանի այնպես էլ Ռուսաստանի քաղաքացիություն, ապա իրենք կարող են գործիք դառնալ օտար ուժերի ձեռքին և այդ ուժերի թելադրանքով ընտրությունների կամ հանրաքվեների միջոցով անցկացնեն Հայաստանի շահերին հակասող որոշումներ, ընդհուպ մինչև անկախ պետականության վտանգումը:

Մի բան ակնհայտ է, որ եթե լինի երկքաղաքացիության վերաբերյալ այնպիսի օրենք, որով Հայաստանի քաղաքացիություն կստանան մեր այն հայրենակիցները, որոնք միայն և միայն ամրապնդելու են մեր երկիրը, ապա անվիճելի է երկքաղաքացիության թույլատրման կարևորությունը: Հիմա արդեն քննարկվում է երկքաղաքացիության մասին օրենքի ուրվագիծը, ըստ որի այլ երկրների հայազգի քաղաքացիները կարող են ստանալ նաև Հայաստանի քաղաքացիություն, եթե նրանք վերջին տարիներին բնակվել են Հայաստանում, ծառայելու են Ազգային բանակում (զինակոչի տարիքի քաղաքացիների համար) և մուծում են հարկերը Հայաստանում: Կարծում ենք, անհասկանալի կլինի նման պահանջներին բավարարող մեր հայրենակիցներին զրկել Հայաստանի քաղքացիություն ստանալու հնարավորությունից: Եվ այն փաստը, որ այդ պահանջներին բավարարող անձինք միևնույն ժամանակ կուզենան պահպանել նաև իրենց այլ երկրների, ասենք ԱՄՆ կամ Եվրոպական այլ երկրների քաղաքացիությունը, չպետք է մեզ անհանգստացնի, քանի որ նման անձինք կարող են ծառայել Հայաստանի արտաքին քաղաքականության շահերին: Այլ երկրների քաղաքացիության պահպանումը մեր հայրենակիցներին, հասկապես ավագ սերնդին, հնարավորություն կտա չկորցնել այդ երկրներում իրենց բազմամյա վաստակի արդյունքում ձեռք բերած կենսաթոշակ ստանալու իրավունքը և միևնույն ժամանակ բնակվել Հայաստանում և լինել Հայաստանի քաղաքացի:

Ցանկացած դեպքում խիստ դժվար կլինի երկքաղաքացիությանը հակադրվողներին համոզել երկքաղաքացիության թույլատրման կարևորության հարցում, քանի որ այս հարցում «ոչ» ասողներից շատերը ունեն զուտ էմոցիոնալ մոտեցում: Բայց եթե մենք գոնե մի քիչ հավատում ենք ապագայում նորմալ օրենք ունենալու հնարավորությանը, որով Հայաստանի ռազմավարական շահերը առավելագույնս կպահպանվեն, ապա մեր կողմից երկքաղաքացիության արգելքը վերացնելուն «ոչ» ասելն առնվազն անհասկանալի կդառնա:

## Նախագահի ցմահ անձեռնմխելիության հարցը

Այսօր սահմանադրական փոփոխություններին դեմ արտահայտվողները հիմնականում վկայակոչում են փոխոփոխությունների այն դրույթը, որով Նախագահը ստանում է ցմահ անձեռնմխելիություն (հոդված 56.1): Ցավոք սրտի այս հարցը սխալ է ներկայացվում, քանի որ սահմանադրական փոփոխությունների այս հոդվածը ընդամենը ասում է, որ «...Հանրապետության Նախագահն իր լիազորությունների ժամկետում եւ դրանից հետո չի կարող հետապնդվել եւ պատասխանատվության ենթարկվել **իր կարգավիճակից բխող գործողությունների համար**: Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար **Հանրապետության Նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո**»: Այսինքն նախկին Նախագահները չեն կարող պատասխանատվության կանչվել ասենք վարչապետի նշանակման կամ որևէ օրենսդրական նախաձեռնության կամ ասենք արտակարգ իրավիճակ հայտարարելու համար: Բայց եթե իր այդ գործողություններում լինի հանցակազմ (անձնական նյութական շահ, կաշառք) ապա այն չի կարող դասակարգվել որպես **իր կարգավիճակից բխող գործողություն**, այլ կդառնա շատ պարզ քրեական հանցագործություն, որի համար տվյալ պահին գործող Նախագահին կարելի է դատապարտել, իսկ նախկին Նախագահներին կանչել քրեական պատասխանատվության: Այսինքն, այստեղ պետք է հասկանալ, որ Նախագահները ունեն անձեռնմխելիություն միայն ու միայն իրենց պաշտոնական կարգավիճակից բխող գործողությունների համար, իսկ **հանցագործությունների** համար նրանք կդատապարտվեն այնպես, ինչպես մնացած սովորական հանցագործները:

## Եզրակացություն

Ակնհայտ է, որ սահմանադրական բարեփոխումները ստեղծում են հնարավորություն ունենալու ավելի բազմաբևեռ և մասնակցային քաղաքական համակարգ, ավելի անկախ դատարաններ, ավելի ուժեղ համայնքներ և օգնելու են ավելի լավ պաշտպանել մարդկանց ոտնահարված իրավունքները: Փոփոխությունների անցկացման համար անհրաժեշտ է, որ առնվազն 700 հազար քաղաքացիներ (ընտրողների ընդհանուր թվի մեկ երրորդը) կողմ քվեարկեն այս փոփոխություններին, ընդ որում հանրաքվեին մասնակիցների թիվը չպետք է 1.1 միլիոնից (ընտրողների ընդհանուր թվի կեսը) պակաս լինի:

Առաջին հայացքից թվում է, որ ժողովուրդը պետք է որ կողմ լինի այս փոփոխություններին: Ակիհայտ է, որ եթե մենք ընտրությունը կատարելու ենք գործող և առաջարկվող դրույթների միջև, ապա առնվազն տարակուսելի կլինի փոփոխություններին «ոչ» ասել, քանի որ այդ «ոչ»-ը կնշանակի գործող սահմանադրության գերադասում փոփոխվածի նկատմամբ: Դեմ ձայների մեծ քանակը անհասկանալի կլինի նաև միջազգային հանրության համար, որի համար դժվար կլինի հասկանալ թե ինչպես կարող է զգալիորեն բարեփոխված սահմանադրությունը ստանալ դեմ ձայներ:

Իսկ ի՞նչ կարող են անել այն քաղաքացիները, որոնք գտնում ենք, որ չնայած այս փոփոխությունները ճիշտ ուղղությամբ են ընթանում սակայն բավարար չեն մեր «այո»-ն ստանալու համար: Եթե կան նման քաղաքացիներ, ապա իրենց համար գուցե ավելի ռացիոնալ կլինի չմասնակցել հանրաքվեին: Չմասնակցելու և «ոչ» ասելու միջև տարբերությունն այն է, որ «ոչ» ձայների մեծ քանակի դեպքում ներկայի իշխանություններն ամենայն հավանականությամբ կհայտարարեն, որ ժողովուրդը ընդհանրապես չի ցանկանում բարեփոխել այս սահմանադրությունը: Քանի որ գործող սահմանադրությունը իրականում մեր այսօրվա իշխանությունների և ապագայում իշխանություն դառնալու մեծ շանսեր ունեցողների համար ավելի նախընտրելի է, ապա կարելի է ասել, որ մեծ թվով «ոչ» ձայների գործոնը կարող է օգտագործվել նրանց կողմից, և բավական երկար ժամանակով «թաղել» մեր սահմանադրության բարեփոխման հնարավորությունը: Հաշվի առնելով, որ 2008 թվականին մենք կունենանք նոր Նախագահ, որը շատ հնարավոր է, որ չցանկանա բարեփոխել Սահմանադրությունը, ապա մենք դատապարտված կլինենք առնազն ևս մեկ տասնամյակ «տառապել» գործող Սահմանադրության պատճառով: Իսկ եթե հանրաքվեն չանցնի ոչ թե «ոչ»-երի, այլ ժողովրդի անբավարար մասնակցության արդյունքում, ապա կլինի հետևություն, որ առաջարկվող փոփոխությունները բավարար չէին ժողովրդի վստահությունն ունենալու համար և որ անհրաժեշտ է ավելի բարեփոխված տարբերակ դնել հանրաքվեի: Սրանով սահմանադրական բարեփոխումների հարցը կմնա օրակարգում:

Այնուամենայնիվ, Հայաստանի ժողովրդի կողմից գուցե ավելի ճիշտ կլինի օգտագործել այս պահը և աջակցել այս փոփոխություններին, քանի որ այն ինչ առաջարկվում է այսօր այն նվազագույնն է , որը անհրաժեշտ է նորմալ Սահմանադրություն և երկրում իրական քաղաքական մշակույթ ձևավորելու համար:

ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
(լրատվական գործունեություն իրականացնող) «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբենյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178,
տրված՝ 28/06/04

**Թողարկման պատասխանատու**
Մուշեղ Թումասյան

**Տպաքանակը**
6000 օրինակ:
Տարածվում է անվճար:

**Հասցե**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 10) 540 289,
www.edrc.am
dzayn@edrc.am

Oxfam